



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՐԱՄԱՆ թիվ 01-03/54

ք. Երևան

25 փետրվարի 2020 թ.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈՒ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱՏԵՂԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆ
ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության (փոփոխություններով) 54-րդ կետի 12-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀԱՊՀ Գիտական խորհրդի 2016թ. հուլիսի 4-ի նիստի թիվ 46 որոշմամբ հաստատված «ՀԱՊՀ ինստիտուտի տնօրենի ընտրության կարգ»-ի 14-րդ կետի 2-րդ պարբերության դրույթները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հրապարակել ՀԱՊՀ Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի թափուր պաշտոնի տեղակալման համար դիմած հետևյալ թեկնածուներին.

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇ ԱՇՈՏԻ

- ծնված 1957թ., տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար:
- 1979թ. գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետը, արժանացել է Լենինյան կրթաթոշակի.
- Համալսարանում աշխատում է 1984 թվականից՝ «Ավտոմատացված կառավարման համակարգեր» ամբիոնի ասիստենտ, դոցենտ.
- 2008-2015 թթ.՝ Քոմպյուտերային համակարգերի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկանի տեղակալ, 2017թ. ՏՀՏԷ ինստիտուտի տնօրենի տեղակալ, 2018 թ. դեկտեմբերից՝ ՏՀՏԷ ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար.
- Հրատարակել է 15 գիտական և 8 ուսումնամեթոդական աշխատանքներ.
- Պարգևատրվել է ՀԱՊՀ Ոսկե հուշամեդալով, Վաստակագրով և Շնորհակալագրով, ՀՀ ԿԳՆ Պատվոգրով:

2. Սիրանուշ Աշոտի Մանուկյանի թեկնածության քննարկումն իրականացնել ՏՀՏԷ ինստիտուտի գիտական խորհրդի նիստում (նիստի նախագահ՝ պրոֆեսոր Ռ. Աղաջյան)՝ ս.թ. մարտի 06-ին ժամը 14:30-ին՝ ՀԱՊՀ 5-րդ մասնաշենքի թիվ 5209 սենյակում:

ՌԵԿՏՈՐ

Ո. ՄԱՐՈՒԽՅԱՆ